

եկեղեցական – ազգային գոլքոցներ ու -
նենալոյ համար, եւ պէտք է որ ըստ
նախնական սովորութեան շարօւնա-
կութի*):

Վ. Ե. Մ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃՇՆԾՊԵՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՀՅԱՍՏԱՆՈՒՄ.

Գ. Հ. ՅԱՀԱՏԵՎԱՐԵՆԻՑ ՀԱՆՈՒԹ.

1842 թի. 12 ՕԴՈՍՏԱՐ.

ՄԱԴԱՐԹՈՒ ՆԱԽԱԳԿԱՅԻ ՎԱՆՔՈՒՄ:
(Ե-Ր-Ն-Ն-Բ-Բ)

Երորդ օրը մի և նոյն տիրացուն Ապ-
տիրոս անուն եկաւ թէ, սրբազնը ողջոյն

(*) Այս առթիւ հարկ է անկեղծութեամբ եւ զո-
հութեամբ նկատելով ճշմարիտը խուստովնել, եւ նոյն
իսկ վերջին քան տարուայ ազգային վիճակը կշռե-
լով՝ ընդհանրապէս կտեսնեմք, զի բուեական մեծ եւ
միաթարական բարեփոխութիւնը եղած են եւ կը բ-
նին դրեթէ ամեն տեղ ինչոքէս ազգային գործոց եւ
Վարչական կազմութեան՝ նոյնպէս բարենպատակ
մեռնարկութեանց հաստատութեանց եւ դպրոցաց
խնդրոց մէջ, եւ սակաւ բացառութիւնքը ի մի կողմ
զնելով՝ պարզապէս կտեսնեմք՝ զի տակաւ առ տա-
կաւ՝ բայց միշտ դէպ ի բարին եւ ի յառաջադէմ
զարգացումն մեծ ջանք եւ բաւական յաջողութիւն
եղած է, եւ եթէ անփորձ անօմնք եւ ստարագրթիք
զիմակաւորներ չյաճախէին՝ անշուշտ աւելի մեծ
բարեփոխութիւններ եւ միաթարական մեռնարկու-
թիւններ կերեւէին: Ինչ եւ իցէ, բաւական է որ յա-
րատե՛ անվիատ եւ անխոնջ ջանք եւ ճիգ թափուի,
եւ ի հարկէ Աստուծոյ յաջողութեամբ նետզիեաէ
աւելի լաւ արդիւնքներ կտեսնուին եւ պիտի սես-
նուին:

ուղարկեց, առողջութիւնդ հարցրեց և
հրամայեց զառ վանքը:

Գնացի ես վանքն, երկար ժամանակ մը
նացի առաջնորդի մօտ, երկար զբոցներ
զանազան առարկաների վերաց անելէն յե-
տոյ հարցրեց ի՞նչ է նպատակս մնալ
անզէնւ թէ զնալ:

Պատասխանեցի, ես նկս ես զեռ և չեմ
վժռած, այսու ամենայնիւ եթէ կը ներեիք՝
կը մնայի վանքումը, ըստ որում մտադիր եմ
անպատական կեանք վարել այսուհատեւ:

Սրբազնը ընդմիջելով խօսքս, բմծի-
ծաղ կցեց. ես շատ ուրախ կը լինելի՝ ո՛ր
այդպէս ջերմեռանզութեամբ ցանկանում
ես ապաշխարել, մանաւանդ սուրբ պար-
տաւորութիւն է ինձ մի մոլորեալ ոչխարը
ուղիղ ձանապարհ առաջնորդել, բայց
որդի՝ . . . բայց ժամանակս դառն է, երկիւղ
եմ կը ում վաղս, միւս օրը չորս կողմի
մահմետականները լսեն քո ովլ լինելն, էս
ժամանակն մեծամեծ վնասներ հացնեն
մեզ, և հաւաստի եմ, որ զու ես չհամա-
ձայնիս քո պատճառաւ մեք վնասներ կը-
րենք, մեր հայն ազգի հայն է, ի՞նչ կը
պակասի վանքէն՝ եթէ մի անձն աւելի լինի
կամ պակաս . . . :

Ուրեմն, պատասխանեցի, ուրեմն սրբա-
զան, ինձ ձանապարհ ցոյց առներ, ես էս
տեղանք պանդուխտ եմ, օտարական եմ
և անտեղեակ ամենայնի, ասաւ աղաչեմ,
ուր պարքէն գնամ և որ տեղ կարելի է
ինձ դադար առնուլ, հանդիստ մնալ և
հանդիսա թողնել զիս պաշտպանողները:

Սրբազնը մտաւանջութեամբ վայրին-
նական լուսութենէն յետոյ, աւելացրեց տար-
տամ համակրութեամբ. որդի, ամենայն
բանը պէտք է համեմատ ժամանակին կա-

տարած, ի՞նչ ասեմ կամ ի՞նչ խորհուրդ
տամ էսպիսի անյոզդյոզդ ժամանակումն,
և լոց:

Սրբազն, իցեցի, շած եմ որ Հայերի
մջնն շատ ճղնաւորներ եղած են և այժմ
ես կան, ապաքէն ուր են նրա և ի՞նչ
միջոցով կարող եմ ես նրանց որոնել,
զանել:

Յանկարծ զարմացումն և մի ժպիտ նոր
րա շրթունքների վերայ սահմացաւ և ապա
յարեց որդին, կրօնաւոր ճղնաւոր բառերը
արտաբերել զիւրին է, բայց նոցա պաշ-
տօնը, պարտաւորութիւնները կատարել
գործով դժուարին է, ամենադժուարին են,
մանաւանդ քեզ համար, որ պատանեկու-
թենեղ աշխարհիս փառքովը մնած և առ-
բած ես մինչեւ ցայսօր, և այժմ . . . այժմ
կարծում եմ նեղացած այդպէս կը խօսիս,
բայց երբ մաիր էն կոչումը՝ էն ժամանակն
կըստրջանաս . . . յետոյ . . . ահա
այս է զլաւաւոր հարցն:

Ու, ոչ սրբազն, վերաբերից մուքումն
հաստատալիս զրած եմ և անշուշտ կա-
տարելոց եմ:

Լաւ, հարցրեց եպիսկոպոսը, միջթէ կը-
րօնաւորը կամ ճղնաւորը առանց կարդա-
լոյ կարող է նրանց կարդը մտնել:

Ի՞նդ հակառակը, պատասխանեցի, ես
ոչ միայն հայերէն, այլ և պարսկերէնն ես
քաջ դիտեմ, արզարե երկար միջոց հա-
յերէնը զործ չեմ ածած, այսու ամենայ-
նիւ ամենայն զիրք յուսամ փարժ կարդալ:

Եպիսկոպոսը ձեռը պարզեց պատուհա-
նէն մի զիրք վեր առաւ բաց արեց, տուեց
ինձ կարդամ:

Վյու ինչ ես սկսեցի զրավարժ կարդալ
մի երեսը, նա փաղաքուշ զէմքով ու ու-

րախ ուրախ զիրքը ձեռէս առաւ, ասաց,
այժմ յոյս հասպատուն է, որ բարինպա-
տակիոդ կըհանենս, և իմ բերած պատճառ-
ները չեն կարող քեզ խոչընդուն լինել,
այժմ միջոց կը մտածեմ հանես խոր-
հուրդիդ, միայն պէտք է յայտնի ասած
որ, էս խառը ժամանակը անհնար է քեզ
վանքումն մնալ, այլ պէտք է զեղումը բը-
նակուիս առ ժամանակ:

Աս զեղումն ուր մնամ սրբազն, պա-
տասխանեցի, միջթէ իմ ասպնջականը ձրի-
արար կը հայթհայթէ իմ պարէնը . . .

Դորա համար, ընդհատեց նա զրոյցս,
զորա համար, որդի դու մի' մտածիր, ես
կը հոգամ: Անմիջապէս տիրացու Մար-
տիրոսը ներս կանչեց, հրամայեց նրան,
տար խանին Սրապիսն պապի տունը, ասա
նրան, որ խանին քո տանը հիւր պաշէ,
ու պատուէ և իւր որդւոց մինը առաքէ վա-
զը վանքը, հարկաւոր խօսք ունիմ նրան
ասելոյ: Աւզդեց ինձ ապա խօսքը թէ, այ-
սուհետեւ կարող ես հանգիստ մնալ, շատ
լաւ կանես որ իսկ և իսկ զնաս տիրացուի
հետ:

Ոտի կանգնեցայ, եպիսկոպոսի աջը համ-
բուրեցի ու զուրս եկի խուցէն կամ լաւ
ես ասած առաջնորդարանէն, տիրացուի
հետ զնացինք զիւզը, հասնէք մի մեծ զուան
առաջելը, ուստի երեւում էր մի ընդպարձակ
բակ, ուր մերձ տասն երեխայք էին խա-
զում, երբ մեզ աեսին՝ շրջապատեցին մեզ,
նոցանէ մինը, որ միւսներէն մեծ էր հասա-
կով, առաջնորդեց մի սենեակի զուռն, ուր
տիրացուն վայրկենաչափ զկայ առաւ, վե-
րարկուի թեղանիքն ուզզեց, կուրծքը ծած-
կեց վերաբիուզդ, մուրուսի փոշին մաքրեց,
ինքեան համեստ կրօնաւորի վեճակ բեր ե-

լով՝ քանի մի անգամ հազար, յետոյ աշով-իրկիւղով և ծանրութեամբ սենեակի դուռը բացեց, ինքն ներս մտաւ ու ինձ էլ ասեց, ինքեան հետեւել: Երբէք չէի կարձել որ, էսպիսի անշուր ղեղումը զտնուել պարսկաստանի կերպ մի երկար ու լայն դաշտ, զոյնզզոյն ապակիներով լուսամուտներ ու փառւածքն Խօրասանի գորգերով և չորս կողմը շարած բարձեր: Լուսամուտի մօտք բազմած էր միայնակ մի կոյր, սպիտակամուրուս, զառամութենէն կորացած մի ծեր, համրիչը ձեռքը որ զռան բացուիլը զգալով՝ զլուխը բարձրացըց ու վեհութեամբ զլուխը շարժեց-հարցրեց, ավել է, ով ես:

Պապի, սրբազանի տիրացուն եմ պատասխանեց տիրացուն:

Նը, հարցրեց ծերը, տիրացու ի՞նչ կայ, հայր սուրբն ի՞նչպէս է, առողջ է, մեզ մոռացել էր:

Ու պապի քաւլեցի, կրկնեց տիրացուն, սրբազանը ձեր ողջութիւնը հարցնելէն յետոյ, և օտարական պարսն խանը հիւր է զրկել քեզ, և խնդրեց որ սա առ ժամանակ ձեր տանը կենայ և քեզընկերութիւն անէ...:

Օսերունին երբ խան բառը լսեց, քանի մի անգամ խան, խան կրկնելով զուն գործեց ոտի վերայ կանգնել ու հարցնել մի և նոյն ժամանակն, թոռնը է:

Ու պատասխանեց տիրացուն, ոչ պց հայ-քրիստոնեայ է, լսած կրկնիսաւ որ Ծառի բանակէն եկաւ:

Հա, հա, լսել եմ, դա է. բարւով հազար բարի է եկել խանն, իմ երկու աչքի վերայ է եկած: Օսերունին էս խօսքերով, զլուխն երերացնելով, ոտի վերայ կանգնեց ու դէպ առ իսուղեց խօսքը թէ, արի խան,

մօտ արի, ձեռս բռնեց, մաերմութեամբ սեղմալով իւր քովը նստացըց ու հիւրընկալութեամբ անկեղծ բառերով ինձ կը շողոքորթէր: Երբ երկուքս նստեցանք, ձերունին ասեց, տիրացու զու էլ նստէ: Տիրացուն պատասխանեց, պապի, հետի է ճանապարհս, ինձ ներէ, սրբազանի մօտը սպասաւոր չկայ, պէտք է ես շուտով վերադառնամ վանքը: Օսերը բարկացած կցեց, ի՞նչ է, ուզում ես զարձեալ ինձ վշտացնեն, էղ քոյ հին սովորութիւնն է նազ անելով տուն և զուս անել մեր տունը, էսքան ճանապարհ եկած ես, կարելի՞ է առանց մի կառը հաց կտրելոյ գուրս զնաս էս տանէն, տեսած կամ լսած ե՞ս, էսպէս բան եղած է, ասում եմ քեզ նստէ, նստէ ես նախաճաշիկս արել եմ, ուրեմն էս պանդուխտ խանը մի՛ թողնիր միայնակ: Իսկ և իսկ ծերը զըլուիր հանեց լուսամուտէն, բումբ ձայնով զօշեց կրկն կրկն անգամ թէ, հարսներ, հարսներ, նախաճաշիկ դրկէք՝ ինչ որ Աստուած պարզել է, և ապա երեսը շըլը ծեց դէպի մեզ հարցրեց, տիրացու նամեցար, չեն զիտում որ ինձ հայհոյեա լսւ է քան զթէ նազ անես, էսքան ժամանակ չընտելացար իմ բնութեանը: Տիրացուն էլ համեստութեամբ ծալսպատակ նստեց, որպէս թէ ծերունոյ աչքերը անսնում էին նրա շարժողութիւններն:

Ինչպէս ունակութիւնն է ամեն ծերի հետաքրքրութիւնն, նոյնպէս և սա անյագ հետամոտութեամբ սկսեց տեղեկանալ ինձանէ ամենայն ինչ երկարորէն և մանրաժամանաբար: Ի վիրջոյ լոելով երեկի և շարունակ պատերազմների մէջ լինելս, կցեց, խան, ես, ես միայն կարող եմ զնահատել քեզ, ես զիտեմ ինչ ասել է քաջ զօրա-

կանի տարարախտութիւնն ինչ պաել է քաջ զինուորն առանց զնքի, քաջ հեծեալն առանց երիվարի, զօրք առանց զօրքազնի: Տեսնումես զիս երկու աչօք կոյր կորաքամակ, զառամեալ ոմն, թերեւս կարծում ես մեր գեղի անդերի, զաշտերի վերայ, անտառների մէջն եմ՝ իմ՝ օրերն անցկացրել ու էս հասակիս հասել. ոչ, ոչ աչքիս լցու, ես ևս քո նման երկրէ երկիր, աշխարհէ աշխարհ, սուրբ մէջքումն, հըշացանը ուսիս երթարի վերայ մերձ քառասուն տարի զինաւորուած, թշնամեացդէմ պատերազմներ եմ մղած, երբեմն յաղթող, երբեմն յաղթուած բանակների մէջ, բայց ոչ երբէք սրտարեկ ։ Ես վայրկենին մի վայելչահասակ պատանինախաճաշիկը ներս բերեց, և ծերունին խօսքի թելը կտրեց: ‘Նախաճաշիկէն յետոյ բաւականին միջոց և ևս պապը կորովի և ճարտար շարունակեց իւր անցած զնացած կեանքէն և էնպէս տեղն ի տեղն, որ երբէք չեր կորցրած իւր յիշողութիւնն: Որովհետեւ ուղեկիցս Մուքին միւս օրը առաւօտեան վերադառնարոց էր իւրեանց գեղը, վասն որոյ և խնզրեցի պապէն, ներէ ինձ փնալ նրա հետ զնաս բարեւ անել և չնորհակալութիւնս մատուցանել նրան: Պապը ապսպարեով ապսպարեց փութով վերադառնամ և մի և նոյն ժամանակն յաձնեց տիրացուին ողջունել զսրբազանն և իւր շնորհակալութիւնն յայտնել նրան որ օտար և պանդուխա հիւրէ առաքել իւր տունն: Երեկոյեան պահ էր ես վերադառնայ պապի մօտը, և կրկին կրկին մեր փոխադարձ խօսակցութիւնները շարունակում էին, այն ինչ սկսեցին մի մի, երկու երկու անդորեայք վերադառնալ դաշտէն, և ընթրիքի ժամա-

նակն ժողովեցան պապի դաշիճը մերձ տասնաշատի մի միայն մորուսաւորներ, որոց մէջը կային չորս թէ, չինդ հողի աղեխառն մօրուսով իսկ մնացեալերն չափահատներ էին: Առքա ամենեքեան նրա որդիք և թռուներն էին: Առքա ամենեքեան ներս գալոյ ժամանակը կը ցանկային պապին բարի երեկոյ և զլուխ կիջացնեին ու կը կանգնեին, մինչև պապը չասեր նստէք, չէին նստել: Են ինչ սեղանը ձգուեցաւ ձեռնի ջուր բերին, միայն պապն ու ես լուացինք, իսկ նրա որդիք և թռուներն զուրս եկին, զուրսն լուացին ու վերադարձան մի և նոյն համեստութեամբն բազմեցան սեղանի վերայ: Մի պատանի կանգնեց սեղանի ներքեի կողմը, ձեռները զրած գօտիի վերայ, օրհնեց, զլուխ իջացրեց, և ապա պապն ասեց համեցէք, նախ ինքն շօշափեց հացին և առա միւսները: Վուռ մօւնջ հացկերութիւնը շարունակուեց: Զարմացայ որ էստեղ ոչ ցքի և ոչ զինի կային սեղանի վերայ: Հացկերութիւնը վերջանալէն յետոյ մի ուրիշ պատանի եկաւ, հացն օրհնեց ու սկսեցին ժողովել և ապա կրկին ձեռնի ջուր բերին, նախ պապն և ապա ես լուացինք, միւսներն մին մին զուրս զնացին, լուացուեցան, վերադարձան իւրեանց տեղն նստեցան: Զկարծեմ թէ, կէս ժամէն աւելի հացէն յետոյ մնացին նոքա, այնուհետեւ մի մի, երկու երկու բարի դիշեր ցանկային մեզ ու զնացին: Անացինք ես ու պապն, և անկողիններ բերին, դահլիճումն երկուքս քննեցինք:

Վոյար չըծագած ոտների շոինդն ու զլողինը և բարձր խօսելոյ ձայները ինձ զարթացրին, կարծեցի թէ նոր ինորոյ բանակի մէջն եմ: Վահամբերութիւնով վեր

թուայ անկողինես, կամաց — կամաց դուռը փոքր ինչ բաց արի, նայեցի. ի՞նչ, — եթէ ասեմ մերձ քառասուն երեխայք, աղջիկ տղայք, պատանիք, երիտասարդք, չափահաս տղամարդիկ և զանազան հասակի կնանիք, ընդարձակ բակի մէջը, մինը դէս, միւսը դէն է գնում; վաղվագում; իւրաքանչիւրի ձեռքին մի մի անդորի գործիք հերկելոյ, հնձելոյ, ձի, ջորի, աւանակ, եղն, կով, ոչխար, էծ, խառն ի խուռն, մինի մէջքին կապոցով պաշար, միւսը նոր է կապում; այլ ոմն ձեռքին բռնած, մին քանիսր նրատած հաց են ուտում, մին խօսքով՝ որպէս թէ, երկրագործի բանակ է: Երբ էս տեսարանն լաւ լաւ նայեցի, միամտացայ որ, ասպնջականիս որդիք ու թոռներն են, գնում են իւրեանց գործին, վասնորոյ վերադարձ տեղումն պարկեցի, և ձիդ ժամանակ չուեց՝ զարթեց և Արապին պապն, ձայնեց Ասրի, Ասրի: Ներս եկաւ մի 17—18 ամեայ պատանի, կոնքն ու իշտչը ձեռքին, վայր զրեց Էնդունք, նախ մեր անկողինները ժողովեց, դուրս տարաւ, վերադարձաւ նախ պապի և ապա իմ երեսը լուանալ տուեց, ու դուրս գնաց: Աէս ժամ ևս տեսց, այն ինչ զրսի աղմուկն վերջացաւ:

Լուռ մունջ մեր աղօթելն վերջանալէն յետոյ բազմեցինք ու փոքր առ փոքր մեր զրոյցն կրկին սկսեցինք և ապա Արապին պապն հաղորդեց ինձ իւր զերգաստանի կեանքէն ինչ ինչ աեղեկութիւններ, այսինքն, օրէն երկու ժամաշափ անցածնախաճաշչիկ կանեմ, ասեց, կէս օրից փոքր անցած ժամաշափ կը քնանամ, արել մայր մանելէն փոքր ինչ անցած կընթրեմ և մին ժամ անցած կը քնանամ: Երեկոյեան, աւելացրեցնա, երկրագործներս այսինքն հանդ

գնացողները վերադառնալիս մին մին կամ երկու երկու գալով, ձէն ու ձուն չի լինիլ, բայց առաւտանան, մին ժամանակում դուրս գնալոյ համար, լսար էս օր արդեօք, ինչ աղմուկ շփոթ է լինում մեր տանը: Ինթրիքիս, եթէ որդիներէս կամ թոռներէս հասին, հետս կընթրեն, թէ ոչ, ներսը մեծ բակ ունինք, ամառն էնտեղ, իսկ ձմեռը մեծ սենեակ ունինք, էնտեղ կժողովուին, միասին տղամարդիկը կընթրեն, և տանեցիքը էլ առանձին՝ նոցա ընթրելէն յետոյ կընթրեն: Կիւրակէ օրերը համարեա թէ բոլոր որդիներս և ամուսնացած թոռներս ու ծուռներս միասին որպէս նախաճաշիկ, նոյնակէս ընթրիք կանենք: Գրերդաստանիս չափահաս անդամները թէ արու թէ էգ, իւրադարձանչիւր ոք իւր առանձին նշանակեալ զքաղմունքն ունի, և էսպիսիները մինչեւ քառասուն հոգի են: Վեկացըցնա, այժմ տասն և ութն ամուսնացած որդիներ, թոռներ և երկու էլ ծուռներս են: Աւթն որդիքս տասն և չորս արու զաւակներ ունին, որոնցից ութն ամուսնացած են. եօթանասունաշափ արու կամ էգ անձինքներէ կըրադկանայ զերդաստունս: Տարին տասներկու ամիս մեր տանը քիչ քիչ տասն օրորոց կօրորուին շարունակ: Փառք Աստուծոյ՝ ամենեքեան էլ ոչ միայն ինձ, այլ և միմեանց հնազանդ են և իւրաքանչիւր ոք իւր պարտաւորութիւնը լրապէս կը կատարէ: Միթէ Երրահամ նահապետի կամ Յակոբ նահապետի որդիքը, թոռունքը չեն աճած, բազմացած՝ ինչպէս իմոնքն են: Մեծ պասին և շաբաթապասերին անընդհատ ամենայն օր, և լի օրերը, միայն երեմն երբեմն շաբաթի օրը, իսկ կիւրակիքն անպատճառ ժամ կերթամ, վասնորոյ իւրաքանչիւր

շարաթը մին թռուս կամ ծուռու, որ 8 էն յ 10 տարի հասակ ունի, պարտաւոր է, առաջնորդել ցեկեղեցին կամ ուր որ գնամ՝ և վերաբարձնել Դուրսի զործերն ինչպէս բաժանուած են արուների մլջն և իւրաքանչփրն իւր արարմունքին է, պատասխանապու, նոյնողը աներսնային զործերն եւ բաժանուած են ութին որդւոց ամուսինների մլջն, և որանք ել երկու ամսէ երկու ամսո կը փոփոխուին կարգով, եթէ չեն հիւանդ կամ յզեւ ընդ հակուակիլն իւրեանց հարաները կը կատարեն նոցա պաշտօնը։ Ես էլ նրան համար եմ ևս կարգադրած, որպէս զի կրնանիքը չափանձուին և մինը միւսի վերաց աւելի իրաւունք չունենայ կամ չասէ թէ իմ նեղութիւնը կամ չարչարուին աւելի է, միւնների վերայ։ Արանգանայն ասած, չերկ անողները, հոգաղները, հովեները, նախրատանիր, ջաղացանը, քոյրեկեանիք մերձներն են և ոչ ուսար մարդ չի խռուի մեր մլջը բացի հնձի ժամանակներն, երբ կրպատահի վարձաւորներ բռնենք քանի մի օրով։

Եսունը ևս բնդմիջեցի միայնակիցի խօսքն և խնդրեցի թէ կարելեէ, պատճէ ինձ Արուպին պատճէն ինչ եր քել նորա անցած կանքեն և կամ ինչ պատերազմը ների մլջ եր նա պատահէլ և ինչ ևն նորա ասածներէն — պատճածներէն պահած իւր մարտմն, համառարար առէ ինձ, ևս զրեմ։

Արանգանայն քանի մի բովովէ մասնելն յեաց ասեց լսէ որդեակ երբ Արապին պապն խնացաւ ևս պարակերէն կարգալ զրել զիանը, խնդրեց իւր մի ուրիշ ծուռին, որ 12-13 ամեայ կը լիներ, պարս կերւն սովորացնեմ։ Քանի մի օր երեխին

դաս ապա շարունակեղին յեաց, առաջարկեց ինձ պապն, որ զրեմ իւր զիլին եկած անցքերը, այս ինքն ինչ կախների մլջ է, պատահէլ և ում հաս։ Ետ ևս նորա ուատմածներն քանի մի թիրթ զրած է, ունն որպէս զի յեաց պարզազրեմ, բայց երբ յանկարծ էնսեղոց գուրս եկայ այս ինքն փախցրին Տաթեւն, անեկանար մնաց պապի նարսաւանը, և մի և նոյեւուն մինչե յայսօր ունինմէ նոր եկած ժամանակը այս անկ երեւնեմն երբեմն կայդեմն է, չեմ կրկնած կարգադրան համբերէ, պատճ, որոնեմն թերեւու զանեմն բնիկն կարգամ մօտղ գու ևս հականունու պարակերներ կարող ևս հայերէն նրա թարզմանութիւնը զրեմ։

Ես ինպիցի թէ կարելի չինի, նոյն սեր տայ ինձ, ամսում բնակարանու կարդամ հանդարառութեամբ ու թարզմանիմ։ Պատասխանեց միայնակեացն, շատ զժուար ընթեանի պէտք է ինին որովհեակ շատ ջնջածներ և կրկն զրածներ կան, բառ որում՝ սոսորշես զիետէ կաւելացնուր յուշերով ինչ ինչ անցքեր, այսու ամենոցներ զնամն ընկամատուունու ու ուրիշ կը կամ։

Քարանցութէնիրը կար, որպէս ասած եմ, մի այլ փարբիկ մութը քարանցաւ, միայնակեացը ներս դնաց, ևն տեղաց գուրս բերաւ մի մաշած, ճակնակ հինացած կը առաւէ կապոց, որի մլջն հանեց զեղնացած, բորբոնած, ձիլտած, զջըլտած, խառն ի խուռն թիրթեր, որոնեց որոնեց, նաց մլջն որոշեց քանի մի թիրթեր, նոյնպէս զեղնացած, կեղասու, ուր ուրել ջնջածն մրտած, աւելացրած, արգարե զժուարըն թեռնի, ինքն լուռ մունջ նայեց, նայեց, խկզրանել ցվերջն կարդակն յեաց, որպէս

թէ սերակց, և յետոյ առեց, ևս կարդամ զու զբէւ Առ ևս սկսեցի զրի անցուցանել ներքյ զրեալներն։

Հայոց թագաւորութիւնը ընկներէն յետոյ, Ֆնումէ (Երցախումը) Վարարա-
գումը Արևեանց յեղնի երկար ժամանակ
ամիսովուած խոր երկրի անմատչելի ըրանց
մշնէն և վերջոց զրացի նշխողները նրանի-
ւս կողմէն Էն կողմէն փոքր փոքր հողեր
կորելով, մուումէ նորու ձեռին միայն Ար-
սիանէն ցԱկող-հայի (ծովակը Գևողանց):
Տարարախութեամի Ախատիան այս բնքն
Արևեանց յեղի զերզաստանների անդամնե-
րէն շատ անհաստարց խարեցայ, խարզախ
մարզիկ նն ծաղռամ՝ որնը ոչ թէ միայն
խռեանց մշք կազ ու կոխներ նն յարո-
ցանում, մին զմինի հետ ուխտազրած լի-
նում, մին զմինի ձեռքնախշութիւնը խոր-
յում այլ և երրենն Պարսկց երթինն Վարց
երրենն յեռնականաց և երրենն Օտանցոց
կազմակեց լինելով, ուսանորում նն Էն պազերը առերեւ խռեանց հայրենիքը: Երբ
զրացի պազերի մինը կը հզօրանար կը զի
մին նրան, փոքր ժամանակ հզան-
գելով կրկին է ասրաւամբենն և կը ովհմէր մի-
ուսին՝ որ հզօրազդին եր: Ա ան որոյ
մինչ յայսօր Հայերի և Պարսիների մի-
ջն հաստրակոց առածէ, երբ մի վէճ կիրա-
կարնեաց, կատան է՛ց, եփ է՛լ Արխանցոց
վէճ դառաւ:

« Զգիտեամ երկու թէ երկը հարիւր տա-
րի յառաջ, որպէս առանգութիւնն լառծ
եմք, Վարատանի իշխանները առանելով նոցա-
անհաստառութիւնն և ուխտազրութիւն-
նըն, մանաւանդ նոյս մինեալը վայրենի
ցեղերի հետ և յարձակուին խռեանց սահ-
մանապլանի զեղերի վերաց և առերենն ևս Ար-

ամբանաց անզամներէն մին քանինը Հըռա-
մանաւ Պարսից Եաշերի, զաղմէել ևն
տարել Վարատանի սահմանապլանին աշա-
չըզ (իմըթիթ) առած սահմանների մօտեր-
քու մն մեծ անառասի մեջք քնակացրած, որ
պիս զի մի կողմէն Վարացիք նիքեանութիւնն իողմէն Բատշաշողները զաղեն նրանց: Ար-
և նոյն ժամանակի երկու հոգի էս սերունդին
իմանալով Վարացի իշխանների նպաստա-
կը, զաղմանի զնումն խորին ուղարմանու-
նը, ուր զանելով Հայոց ակզին հին հին
ժամանակիները դապիթուած և մահմեական-
ութիւնը ընդունած երկելի նախարարների
սերունդներէն մնացած Արշաններ (Ուշի-
դիւ): և Յառանշիր անուտմի, ծանօթմանում
նն նրանց հետ և ազգականութիւնն անում:
Էս երկու նախարարական ցեղերը շատ ե-
րեկի և պատստական որեարներ լինելով
Պարսից շահերի զրանը, կարողանում էն Ար-
սիանի ցեղին փախտական անզամներ և
ևս յառաջ քաշել և մեծամեծ սրչաւոն-
ների ուրի շնորհ: Աոցանն մինըն Էս ասրի
(1700) սկզբներումը Ուստում խան անուն
որպէս բախտահինդիք վերադանումէն Ար-
սիանու նպատակաւ ափրկորց խոր հայրենիքն
կամ թէ նորոգէ խոր սրազական իշխանու-
թիւնը, բայց երկրացիք մնա ացած ևս սե-
րունդն ստացած վեանները չնն ընդունում
նրան որպէս իշխող յեղից ծաղռուած, վաճ-
որց և նա քանի մի տարի աստանզական
շրջմարի երերալով, վարանդի զմնում է
վրաստանումը զաղմէուած խոր ազգակից-
ներին որոնք նոյնովիւ չնայելով նրա երեսին,
պարտաւ որպւումէ վերադանուալ Արխան,
զրգուումէ Հայ-ժորամուրզը և կարողա-
նումէ համոզիր նոյս որպէս զի զիմնի
վաց թագաւորին ու որս օկնութիւնութեաւ

ընդդեմ՝ Պարսիկ խաներին տպատամբուխն։ Ես խաները են ժամանակը ամենայն ուրիք ինքնազլուխ կիշխեին և շատ կը նեղեն հայերը երբ և Սփղանները տիրել են Պարսից գահը և սրանց օրինաւոր Շահը, Շահ Նիւթեյն անուն, բանտարկուած էր Սապահան, խոկ նրա որդի Շահ Խամազը շրջում էր, էս կողմն էն կողմն հնարք զլանել, զօրաժողով լինել առ ի ժառանգել հայրենական Վթոռը։»

«Ուստամ խանը (մահսէր) շրջաբերական ժողովերով Պարաբաղի երեկի մելիքներէն և ժողովուրդէն, որպէս ինքն պատգամաւոր, տանում է ներկայացնում վրաց թագաւորին ու միջնորդներ ձգում, որպէս զի զօրք ուղարկէ օգնել նոցա և զինքը զօրավար կարդէ։ Իսյց վրաց թագաւորն քաջ ճանաչերով Ախախն (այժմ Զիցիան կամ Զիցիանով վերակոչուած) իշխանների բարք ու բնութիւնը, մանաւանդիւրնախնիքն երի կրած նեղութիւններն էն աղքատոհմի նախահաւաներէն, բացէ ի բաց մերժում է նրա առաջարկութիւնը և նշանակումէ մի քաջ անձն Դաւիթի բէկ անուն, Վրցախի կողմերէն գաղթուած երեխն վըրաստուն ու երկար ժամանակ ծառայած իւրեանց արքունիքի մեջն, վաստակած փառք պատիւ և պաշտօն զօրադիւնութեան։»

«Նօրս հայրը Արագիոնն ունենում է երկու որդի, երեցն Առուրի ջան, կրտսերն Պատ անուն։ Ես Առուրիջանի երեց որդին եմ, անունս պապիս անուամբ Արագիոն կոչուած, և թէ ոմանք զիս Պատ ևս կանուանէին ի պատիւ զառամութեանս։ Մինչև Դաւիթի բէկի դալը, մեռաւ Արագիոն պապս, և նրան յաջորդեց հայրս, որ

քանի մի տարէն յետոյ զիշերը իւր տան մէջ սրախողող եղաւ իւր թշնամիներէն։ Նօրս յաջորդեց մելիքութեան պաշտօնիւ Պատ հօրեղբայրս։»

«Դաւիթի բէկի առաջին զինուորակիցներէն մինն էր հայրս, երբ 50—60 միայն մարդով զնացին Ախախն զիւղն և վանեցին անդէն Կարա—Չօրլու ասած տապատղքուրգերը։ Նայրս էր, որ ամենից առաջ զնաց Տաթեւու առաջնորդի մօտը պատգամաւոր Դաւիթի բէկի կողմէն ու զնա համոզելով առաջնորդեց Դաւիթի մօտը, Շնչեր զեղումը մին զմինը տեսին, ծանօթացան, խորհուրդ արին, և յետոյ Վաջնորդի խրախուսելովը մինչև 400-500 քաջ երիտասարդներ զբահաւորուած ժողովեցան ու սրբազնն նոցա դրօշն օրհնեց ու օծեց։ Կացանէ մինն էլ ևս էին ես ծերացած այժմ ևս երկու աչօք կուրացածս, և փութացինք՝ զնացինք յաղթեցինք զինի դոռ պատերազմի, էն հաւատափոխ Ֆուանշիր ցեղը, որ միշտ զայերը կասպատակէր, և Միհթարն՝ էն քաջ՝ ամենաքաջ տղամարդն ունենուով մեղ զօրավար։ Վյունուհետեւ էս քաջ անյաղթելի մարդն մեր երեսը պարզ հանդիսացրեց աշխատրչքի և մեր ընտանեաց առաջնեն։ Իսլոր նորա ստորագրեալքս նորա արեւովը և զինովը կերպինք, նորա ամեն մի խօսքը մեր համար պատղամ էր։ մեր արիւնը չինք խնայում նրա համար։ Նրա խրոխտ, բայց ամոք՝ քաղցր բնութիւնն՝ սրտազրաւ զէմքն՝ թիկնաւէտ և բարձր հասակը, պատերազմի մեջը թուր խփելը, անվեհեր և անշփոթ մնալն, անձնամատոյց լինելն ամեն վտանգի մեջ, անպատմելի են։ Շուտով միացաւ մեր հետ հնարագէտն Թորոս՝ Զավենովուրի իշխանը

(որ նոյնպէս սիրելի էր զօրքին), միասին ասպատակեցինք Յահուկ, Աւրղբատ և նրա չորս կողմի գեղերը: Արանէ յետոյ Վահիթ բեկի հզօրանալն երբ հռչակուեցաւ և միամտացան ամենիքեան, որ նա կարող է զործ տեսնել այնուհետեւ, վասնորոյ մելք Փարանադանն և նրա վիսայ Տէր Աւետիք քահանէն և փոքր Արւնեաց աշխարհէն և ևս քաջ մարդիկ եկին միաւորեցան նորա հետ, յորմէ չորս կողմի խաները զգաւով որ Հայերի զօրեղանալը զնոտլով-զնարյով սաստկանումէ և անպատճառ ժամանակաւ վտանգաւոր է ինքեանց, վասնորոյ և միուորեցան առ ի զսպել հին ժամանակէ ի վեր ինքեանց հպատակեալ մի ժողովուրդ: »

« Մի զատկի օր Զավընդուրի դրացի իշխողները մերձ քսան հազար զօրքով մըտադիր էին եղած քաղանի յանկարծ յարձակուիլ Հայերի վերայ ու մին հարուածով վերջ տալ նոցա տպստամբութեանը, կարծելով թէ՝ Հայերը դատիկ օրը կամ արրած կը լինին կամ ցրուած իւրեանց տները Հնարագէտն թնորոս էս նրանց նպատակը ծանծկարտը լսումէ լրտեսներէն, վասն որոյ զանխուլ պատրաստուեց նախ քան զնոցա խլոտին, ինքն յարձակուի նոցա վերայ: Աւստի Հայոց զօրքը երկու մասն բաժանեց նա, և քաջ ծանօթ զորով տմեն կիրճերին, ձորերին և ինչ տեղաց թշնամեաց յարձակուելոյն, ուստի ամեն զժուար անցանելի տեղերումը կանգնացրեց, կարգեց մի մասն զօրքի, իսկ միւս մասը ժողովեց երեկոյեան թաթախումի օրը մին դիւր ու տափարակ դաշտի վերայ, ինքը բարձրացաւ կանդնեց մի քերցի վերայ, քարող տուեց զօրքին էսպէս. « Եղբայրներ, մօտ չորս հա-

րիւր տարի է, մեր թագաւորութիւնն կորցրել ենք, մեք գերի էինք մնացած մեղ շըրջապատղ մահմետականների ձեռին, որոց ահա քանի մի ամիսէ, իւ վեր մի զինի միոյ յաղթում ենք նրանց, որոց մեր հայրերը, պապերը, պապի պապիկը անյաղթելի էին ճանաչել: Լաւ մտածեցէք եղբայրներ, ի՞նչ էր նրանց էնպէս Ճանաչելոյն և ի՞նչ է պատճառն մեր յաղթելոյն: Խթէ մեր մեր մջն սիրով չմիաւորվենք, մի սիրտ, մի հոգի, մի խօսք՝ և միաբանութիւն չունենայինք, մեր պապերի նման մեր ևս նոյն թշուառութեանց մէջը կը մնայինք, բայց միաբանուեցանք, մին զմինի հնազանդուեցանք, նրա համար էլ սուրբ Խաչն մեղ յաջողեց ու ամենայն տեղ էլ յաղթեցինք: Եղբայրներ, բաւական էր որքան էս անօրէններն մեր պապերին հրամայեցին թէ, մեր ձիանց երաստանակը բոնէք, մեր ձիանց ուղանէրուն կշռեցէք, մեք հեծնենք, ոյսուհետեւ մերն է ժամանակին նրանց հրամայենք՝ թէ որ միախորհուրդ համաշունչ մնանք, ինչպէս կանք: Խաւական է որքան նրանք մեր արիւն քրտինքով վաստակածները խլեցին մեր ձեռնէն, մեր տղերքը, մեր աղջեկերքը, մեր ինանիքը մեզանէ յափշտակեցին կամ դերի տարին, մեր հօտերը, նախիրները, ջոկերը քշեցին, այսուհետեւ հերթը մերն է, յուսացէք էս հրաշալի սուրբ Յարութեան օրին և քաջութեամբ կռուեցէք, հրեշտակները մեղ կօդնեն, մեր սուրբ նախնեաց աղօթքը հասել են երկինքը, ընդունելի են եղած Աստուծոյ աթոռի առաջելը սրբոց Պարղանանց նահատակութեան բարեխօսութեամբն: Կսածներիս ապացուցութիւն է, որ շատ անզամ մեր թշնամիքն մեր առաջին փախան ամօթով, փորձեցինք որ

նրանց թաւրիքի բերանը բժմացել է, եղած առաջուան նման ուուր և կորսէկ չէ, Վատուած նրանց հակառակ է, իւրիանց անփառաւութիւնների համար յուսացելք Յիսուսի Քրիստոսի մեջ ։ Վարութեան՝ և ամեն բան կը յաջողի ակը զօրանոնքը, Եմին առացելք եղբայրներւ։

«Եսոյորիքեանն էլ միարերան ազգապահեցնեցիր երեք անդամն, Առնե, Առնե, Առնե։

Արանե, յետոց Տեր Առեալիքը թիթի ժամանեց, պատարապեց, բոլորին հացորդեց սուրբ տարեան և մարմնայ խորհուրդնեալ պատմինս ձուալ բացաբինք ։ ուսի վերայ ընթերցինք ու զիշկեն շատ փառք անցած չար կողմէն յարձակաց վերայ որոնք անկարգ և միամիտակային բանակաւած ։ Խորհուրդները գոտալէն ։ Գուշելն Էնոքն զարհարեցան և շփոթեակցան, որ չկարողացան խորեանց զենքերն ու սկզբնին ձգել ։ վասնորոյ և սկան խաւանաւիլ աւ վախչելք մեք ։ Ել որբան կարողացանք կոսորիցնեք, և նոցա մնացեալ վախաճներն, մեր զօրքի միւս մասը որ կիրճերուն կը հսկին, սոցա սրերի կերպութիւն եղան։ Ճրաշալի սուրբ Զատարիկը մեր համար կրկնագանիկ եղաւ։ Մեր ձեռք բերած առարքը մեր մեջ բաժին բաւելն արինք, վանքի մասն ։ Ել ու զարկեցինք ու խնդրեցինք որ առաջնորդն մեզանն պանաճափ նու հաստիների եղածների հով վերը յիշեւ սուրբ պատարագի մեջն։ Արկ բորդ օրը Խորոսը մեր կոտորել առաջնորդ ու առաջնորդ առաջնորդ առ մասար աստակացաւ, երկու կողմն ։ Ել յամառուած սուրբ ձեռներաւ մենքնինքն կը կոտորել ինչ պաշտիանութեան ու անգամ յաւսահանութեան ։ զուր թափուեցան, հարուած տուին Հայերին թեւ ինքեանք ։ Ել և ես առամիկ հարուած կրկնեն, բայց շա վախուեցաւ մարտի բախտան։ Լուր հասաւ ։ այերին թեւ պաշար բեղոց օգնութիւն է պարզ վաճնորոյ կրիստու օրը Տեր Առեալիքը զգիսաս որուեցաւ քահանայական սաղան արգին դիմին, աջ ձեռումք սուրբը ։ Յափան ձեռումք սուրբը ։ Յափան ձեռումք սուրբ ։ Կայ

վասն սրոց մօլիքն էլ ձեռներու մն կուրան մինչև քասն հոգիներկայացան Թորոսին կրկնն անգամ էս խօսքերը նրանեւ լուզն յետոյ զնացին իւրիանց համար առաջնորդները թագեցին։ Ասրա համար Թորոսի անունն է ևս փառատորուեցաւ ըսրա կողմի մահմատիանների մեջն ըսրա որում մինչև էն օրն էապիսի մին հրցեար ծեսի թողբառութիւնն պատերազմն յետոյ մինչև անդամ իւրիանց հաւատակիցն երեմ ծքը, ոչ բուած եր և ոչ ակաւած։

«Եի քոնի շարաթ անցաւ չանցաւ լուր բերին թեւ բօլոր Աղիքները հաւաքուած են իւրիանց զորքով ։ Դասիթ բեկի մօտը Սփորմելի է ինձ միտ բերել էն նաւիրական օրը, երբ ամեններան ուրախուրախ կերթայինն որովհետեւ մի շաղի միանն էն եղած ամեններեան։ Խոզովուեցան Ս' եղիքները ի՞նչ խոսեցին իւրեանց մեջը ոչ որի յայտնի չեզաւ, բայց երորդ օրը զօրքը առաջնորդները զետեւ կը կոտորել ինչ խան անուն բազոր Հայերիս թշնամին։ Աներդը պաշար բեցինք, առաջնի օրը բանի մի առաջի յարձակութիւններ եղան։ իսկ երկրորդ օրը արխինուած շատ մասար աստակացաւ, երկու կողմն ։ Ել յամառուած սուրբ ձեռներաւ մենքնինքն կը կոտորել ինչ պաշտիանութեան ու անգամ յաւսահանութեան ։ զուր թափուեցան, հարուած տուին Հայերին թեւ ինքեանք ։ Ել և ես առամիկ հարուած կրկնեն, բայց շա վախուեցաւ մարտի բախտան։ Լուր հասաւ ։ այերին թեւ պաշար բեղոց օգնութիւն է պարզ վաճնորոյ կրիստու օրը Տեր Առեալիքը զգիսաս որուեցաւ քահանայական սաղան արգին դիմին, աջ ձեռումք սուրբը ։ Յափան ձեռումք սուրբ ։ Կայ

չը, Միմիթարն եւ քամակին բներած, որոց
էլ հետեւամ էր դորրու յարձակուեցանք
բերի իւ էն կողմն, որ յուսալի էթ շուտով
առնուի. Մեր նպատակը սպակուեցաւ,
սաստիկ յորդտկումն յետոյ իւր որ եր՝
կատարեալ յաղթութեամբ մոխնք բերդն
ու ամբեցնիք. Մերձ հինգ հարիսը մարզ
մեզան, էն երկու օրու մի նահատակուեցանե
ց3000 նոցան. Նոցա կնանիքը երեխնքը
զերի մնացին մեր ձեռքումը և նոցա կայքն
էլ տիրեցնիք. Պատերազմը մերջանալին
յեսոյ Տեր Անեսիքը յորդուում խրապում
էր մեզ խնայել սպառեաշների կեանքին,
բայց ով Երնդա խօսքին էսպիսի ժամանակնեայողն նոյնալ. Միմիթարն և մեռ
րոն մժոյլ սառին մշշամիներին շատերը
փախչեն, սպառումն մեզ ձեռնեն. Գալիքիթ
րէկը միւս օրը հրապարակեց բերդի մջի
երեխնքանց և իդական ցեղեազատութիւնն,
ուր կամին զնուու իր նոցա կայքը, ինչպէս
աւար սպառզեեց զօրականերին, ոչ մնքն
և ոչ մեզիքնեղը մանկալից շինելով. Օ-օրքն
էլ բառ սովորութեան մասն բաժին ժամու
պատարացին հանելին յեսոյ, մնացեանը
բաժանեցին խրանց մեջ. Յանու մաս
... Արքան զնուում էր, Կարպն Ճայերը զօրեա
զանում էն թշնամեաց մերայ ոչ միայն
էնակ-լուսեղ պառաւ շաճ մաներ-մուներ պահ
աերտ զններին այլ եւ երեխնեաց մեջն ես,
և հոքը աւ սուրը մեր ձեռքումք դաստիմ
էնքն նրանց, աւ երակ էնքն դարձուում նոցա
ցեղերը ու զրուում նոցա հօտերը, ջոկերը
և նախիրները. Շատ անզամ Խոռը բերը
վառութեամբ անձնատուր էնքն մնում և
մերոնքն նոցա խնայում էնքն, բայց կրկնն
նորա խրառում էնքն ու միանում իւրեանց
հաւատակիցների հետ միացում խօսուու-

մին երգութն, և էսպիսի նոցա հաւատա-
զրժութիւնն աւելի և աւերստիսում դայլ-
երը անմնայտար ամենայն ուրիք սրոյ ճա-
րակ տալ զնոսա և նոցա կայքը յափշ-
տակել.

«Արտանայ բերդն իւր ամրութեամբն
որջ էր եղած թշնամեաց համար, և յա-
ճախ էն տեղաց դուրս էնքն դախն յար-
ձակուում Ճայերի զեղերի մերայ, աս-
սպառակում ու մերաղաւեռում ու դատրու-
սպարուում բերդի մեջն: Քանիի մի շո-
րաժ ամենայն որ շարունակ յարձակուում
էնքն էն բերդի մերայ բայց չինք կար-
զանում ամբել, մնչեւ յանկարծ Օ-ադ-
կազարդի կիրակի օրն երբ բերդի սպարիս-
ով մի կողմը ըլաւ որպէս թե Աստուծոյ
ձեռն էր, որ դայերը կօգնել աներեա-
թարար, մեք և ոմիա հազարն զույժ տունք
նիրս մնինք բերդը սկսեցնիք սրախոզող
մնել զենք կրող աղամարդիքը, իսկ նոցա
կատակը երեխներն ողորմազին աղաչում
էնքն խնայել բնքեանց: Սրդարե մեր մե-
լիքները խղճալով նոցա թոյլ չին տա-
լիս մեզ իսուրիել, բայց շատ քիչ զօրա-
կան կոր նոցա յորդորանացն և արգելե-
լոյն հնազանդուող, բայց որում թշնա-
միքը մեր հաւատի թշնամիքը մեզան.
շատ ոչխոր, եղան ձի էնքն յափշտակու-
մու տարած երտուիսի միւս կողմնան իւր-
եանց հաւատակիցների մօսուու անդ թո-
ղած կամ վաճառած ու այս որդոյ ուն
Արտօնայ բերդը տանելն էր մի փառա-
ւոր յաղթութիւնն, որիցը ճաղեց Ճայերի
մարումը զանազան զարափարներ. ուստի
ժողովնեան բայր իշխանները, մելիքները,
և երեւլիները խորհուրդ որին ու հաս-
տառեցին Ճայերի բեկն իւրեանց մերայ

զլեաւոր մեծաւոր (սարդար), իսկ զմիւս մելիքները կամ զօրք ունեցողները զօրավար անուանեցին, զոր օրինակ Մխիթար զօրավար, Խորոս զօրավար, Փարասպան զօրավար և լին. և խօսք կար թէ, մոտազիր են նշանակել զ' Կաւիթ բէզը թագաւոր և օծել Տաթեկի վանքումն և թէ ըսպասում են Պարաց թագաւորէն զեսպան զայ և թագ բերէ: Տարաբախտաբար էս զօրավարութեան կոչումը շատերը վշտացրեց, ըստ որում ումանք ինքեանց արժանի համարելով էս կոչմանը և էն չտանալոյ համար սրանեցան ու ոխակալ եղան, նախանձեցին, ուստի եւ իւրեանց պատիմը շուտով կրեցին: Էս զժզոհներէն մինն էր և կարող եմ ասել զլեաւորն էր իմ հօրեղբայր Պապն, որ ամենայն պատերազմի մէջ իւր երկու հազար զօրքովն ներկայ եղած և ամենայն ուրեք քաջութեամբ հանդիսացած, մանաւանդ մոլեալ լինելով թշնամեաց արիւնովը, նոցա իւր եղբայրը խողխողելոյ համար, լայն — երկար վաղակաւորը ձեռումը՝ կրմտնէր պատերազմի ասպարէզը թիկնոցով, անկապայ, երկաթազմը զրահաւորուած անխնայ կկոտորէր, շատ անզամ էր պատահած, որ աչքերը արիւնով լիքը՝ չը որոշել հայ է թէ թուրք, անզանազանաբար պատահողը կիմիրաւորէր, եթէ հայն շասէր թէ հս հայ եմ, մինչև անզամ թուրքերը նրա բնութիւնն իմանալով, սովորած էին բառու հայ, կդոչէին հայ եմ՝ հայ: Եհա սրա համար էր որ՝ թուրքերը Պապ հօրեղբօրս կվերակոչէին Բաքէը զհաննամ, այս ինքն դուռն դժոխքի, ինչպէս էլ Խորոսին կասէին Խորոս և Մխիթարին Երևան, այս ինքն վարագ կամ խոզ:

Թէ միայնակեացը յօժարութեամբ կը շարունակէր կարդալն իւր զրածը, բայց ես յոդնած էի, ուստի խնդրեցի էլ չշարունակէ, ես էլ թխթերս ժողովեցի, մընաս բարեւ ասի զուրս եկի, զնացի վանքն, և միւս օրը վաղքաջ ընդ առաւաւան ելի վանքէն, հասայ միայնակեացի այրն: Եհա նորա կարդացածների շարունակութիւնն են յետագայքս:

«Վարդուշատի իշխող Պաթ - Ելի խանը, որ մեզ շրջապատողներէն ամենազօրեղ թուրքն էր, մինչև էն ժամանակը չեղաք կար, ոչ մի կողմին չէր հակեալ բայց լսելով Հայերի ամեն տեղ գերազանցութիւնը Մահմետական — իւր հաւատակիցների վերայ, մոմբռում էր և պատճառ որպնում պատերազմ բանալ սահմանակից մելիքների մինի հետ գոնէ՝ ու պղտոր ջրումը ձուկն որսալ: Աս ունէր արօտատեղեր, որոնք հարիւրաւոր տարիներէ հետէ կպատկանէին Հայերին, բայց քանի մի տարիէ հետէ բռնութեամբ ինքը տիրապետած էր և ստանալով Հայերիցը նախ փոքր ինչ և ապա սակաւ առ սակաւ աւելացնելով զինը, թոյլ կոտր նոցա մակաղել իւրեանց հօտերը: Էս անզամը չկամեցաւ Պաթ - Ելի խանը տալ Հայերին արօտատեղերն վարձով անզամ, ուրեմն և նոցա հօտերը պէտք էր սատակէին քաղցածութենէն ու շոքէն, որովհետէ հետէ հետի տեղ արօտներ ևս կային, բայց էն տեղբանք խաշինք տանելը՝ կնշանակէր թշնամեաց կերակուր անել, ուստի Խորոս զօրավարը Զավերութէն պատզամաւոր զրկեց նրա մօտ, ասել, առիթ չտալ երկու զրացի ժողովուրդի մէ-

Չը խռավութիւն ծաղէ, մի և նոյն ժամանակն էլ առաքեց ամեն տարուայ վճառուած վարձը, Վայց Փաթ - Ելին բացէ ի բայ մերժեց էս առաջարկութիւնը, վասն որոյ և Թորոսը հարիւրաւոր ձիաւորներ և Էնքան էլ հետևակներ ուղարկեց հովիւների հետ, որպէս զի բանութիւն զործածուի Փաթ - Ելի խանի կողմէն, նոքա էլ պաշտպան հանդիսանան հովիւներին: Փաթ - Ելին լուրս հասնելէն յետոյ, առաքում է իւր եղբօր որդուոյ հետ նոյնպէս հարիւրաւոր ձիաւորներ՝ առ ի արտաքրակ արօտատեղերէն ։ այերի հօտերը: Էս երկու զատ հակառակորդների մէջ նաև փոքր յարձակումներ է պատահում, հետզհետէ սաստկանում է զառնում հասարակական պատերազմ՝ ու սպանուում է Փաթ - Ելիի միակ եղբօր որդին, թերեւս իւր Փաթ - Ելիի թելալրութեամբ, որպէս և շատերը կհաստատէին, իրը ժամանակաւ իւր մահուանէն յետոյ՝ իւր որդին տիրապետէ իւր իշխանութիւնն առաջնո և իցէ հակառակորդի, բայ յայնմանէ՝ ներկայումը առ երեսիմ ցոյց տար թէ ասպարայ պատերազմի պատճառն էր իւր ազգականի մահն, որպէս զի՝ մահմատական իւր հպատակներն և ևս մոլես անդումնամբ մարտընչեն ընդումք քրիստոնէից:

Եյնուհետեւ Փաթ - Ելին իւր վիճակէն զօրաժողով եղաւ, Երասիսի միւս կողմէն էլ բաւականին զօրք վարձեց, մերձտասն հազար զօրքից ստուար բանակ կազմեց յարձակուեց Զավագուրի վիրայ, որպէս թէ վրէմինդիր լինել ։ այերիցն եղբօր որդուոյ արիւնի համար: Թորոսն արդին տեղեակ էր նրա ամեն շարժմանցը, վասն որոյ և լուր էր տուած Պապ հօ-

րեղբօրս՝ շտապով իւր զօրքը ժողովի, զընայ միանայ նրա հետ: Թշնամեաց զօրքը շատ աւելի էր բան զթէ ։ այերինը, բայց նոցա մեծ մասն հեծելազօր էր, ուստի և Թորոսը զուն զործեց պատերազմը ակսել դաշտի վերայ, ոյլ ձորերի մէջ և լերանց կողքերումը, ուր հեծելազօրը կանպիտանանար: Էս նպատակաւ էլ կարգադրեց որ, ինքն իւր զօրքով սկսէ մարտն ու փոքր ինչ պատերազմելն յետոյ փախուստ տայ, մանէ ձորի մէջն, իսկ Պապը յանկարծ միւս ձորէն, որ շղթայած էր նորա հետ, անակնկալ թագատնեն զուրս զայիւր զօրքով ընդհատէ թշնամեաց բանակի մին զմինի հետ հաղորդակցութիւնն: Եյն ինչ թուրքերը հալածեցին զայերը և անզգուշութեամբ մտին ձորը, Թորոսը ըստ հասարակեալ սովորութեան հրամայեց հարկանել թմրուկը և հնակ փողը: Վարար նորոգեցաւ՝ երը և ինքն իւր զօրքով վիրապարձաւ, ումի և նոյն բովակէն էլ Պապը լսելով թմրուկի և փողի ձայնը, յարձակուեցաւ ի թագուստի կացած ձորէն թշնամեաց վերայ, որոց առաջապահ դօրքը բաժաներով վերջապահէն, որ բատ մեծի մասին վարձուած էր և ձորի անձկութեան համար տղուած, որպէս թէ կքայլէր, ուստի և շուտով ի փախուստ զարձան և ։ այերը բարեկատեհ միջոց ունենալով սաստիկ հարուած տուին նոցա, էն սատիճան՝ որ հազիւ թշնամեաց կէսը կարօղացաւ ազատուիլ: Վեարի կողոպուտն էնքան շատ էր՝ որ հաշիւ չկար: Էս երեկի յաղթութեան լուրը Թորոսը շուտով հաղորդեց որպէս Պապիթ բէլին, նոյնպէս և միւս զօրավարներին: Երկրորդ օրը աւարը բաժանելն յեայ բոլոր զօրքը

միաբերան, մի հոգւով, մի սրաով դաշեցին՝ Պատմ ևս պէտք է, զօրավար անուռանուի, որովհետեւ նա խնկութեամբ և ծըշտութեամբ կատարեց Խորոս զօրավարի կարդաղութիւնն: Խորոսն էլ խոստացաւ առաջարկել Պատիթ բէկին և միջնորդել կատարել նոցա խնդիրքն: Միւս զօրավարները լսելով էս յաղթութեան լուրը, կժողովուին Պատիթ բեկին մօտը, ուրախակից լինել, և ահա կը ժամանէ և Խորոսի նամակը Պատղի զօրավարութեան մասին: Կոցա մէջն էս առարկայի վերայ ինչ խորհուրդ կանեն, Աստուած զիտէ, միայն թէ քանի մի օրէն յետոյ Խորոսը նամակ ստացաւ Պատիթ բէկին, անուանել այնուշետեւ զՊատղ փոխանորդ (նայիր) զօրավարի: Ի հարկէ էս նշանակութիւնն ոչ միայն հօրեղքօրս, այլ և բոլոր նորա զօրքի համար անգատուութիւն համարեցաւ, ուստի և Պատղն էլ սրտնեղութիւնն քաշուեց, զնաց իւր տունը, զօրքին էլ հրամայեց զնալ իւրեանց տներն ու սպասեն միայն — մի միայն իւր հրամանին: Խորոս զօրավարը տեսնելով որ Պատղ առանց ինքեան հետ ողջունելց յանկարծ չուել է զօրքովը զնացել, շատ ինեղանայ, և հետղշետէ մորզիք կուղարիկ վերադառնոյ, բայց նա յումառուած, չուզեց անգամ լսել նրա ապլազարանքն: Քանի մի օրէն յետոյ Խորոսը հարիւրաչափ երեելի մարդկանցից քաղկացեալ ձիււորներով եկաւ հօրեղքօրս տեսնութիւն, երկու ընտիր նժոյգներ էլ պարզե բերելով, չորս օր կացաւ նրա մօտ, միսիթարեց, յուսազեց, սիրտն առաւ և խոստացաւ մի այլ անգամ յաղթութիւն անելն յետոյ, անշուշտ զօրա-

գարութեան կոչուցն առնե, Պատիթ բեկին: Հօրեղքայրս Խորոսի խոստամանը հաւատալով, կրկին միացաւ նորա հետ, մի մեանց օգնելով, զուգեցին դրացի թշնամիները, մանաւանդ կանավուղին զուրացաւ հանեցին բոլոր մահմետականներն, ուր միմայն Հայերը մնալով, այնուշետեւ էլ Պատիթ Վլի խանն երկիւղ կրելով, ասպատակութիւն չեր կարողանում անել, և մեր մեր հօտերը ջոկերը, նախիրներն ամենուրեք անզբահան աներկիւղ կարածացըները, շատ անգամ էլ մի զիւղէն միւս զիւղը զնալիս, կանայք անգամ առանց տղամարդի կերթային, այն ինչ նախ քան զայն կարի զժուարին էր:

Աշուեղ փոքր ինչ շեղուինք մեր պատմութիւնն և ասենք ինչ ինչ տեղեկութիւններ, որք կվերաբերին մեր Հայերին, այս ինքն Պատիթ բեկի գալու օրէն տարածուել էր ամենայն տեղ լուր թէ, Ուուսի թագաւորը մեծ զօրքով զուրս է եկած Պարբանդ, Պատղու և զալիս է, Հայերի հետ միանայ, ընդդեմ Պարսից կոյւանէ, և սրա համար էլ սարի էն կողմի այս ինքն Պիւլստանի, Խաչենից Ասրանդի, Գուշակի և Զարաբերթի Հայմելիքները զօրք են պատրաստում: Էս էլ աւելացնում էին թէ, Ուուսի թագաւորը մեծ զումարի զրամ, վառօդ, արծիճ է զըրկել Հայերի համար, բայց Պարս թագաւորը զրաւել է, չե կամենում առաքել, շատերն էլ հաստատում էին որ, Պարս թագաւորն ուղարկել է, բայց տարի էն կողմի վերոյիշեալ մելիքները թոյլ չեն տալիս բերեն մեզ հասցնեն: Էս եկաւեկաւն, ասուլիսն որքան Հայերին քաջալիքում էին, յոյս էին տալիս, նոքան էլ

թշնամիները վհատում էին: Ի՞այց նրանց
ուշանալն և սուտ լինելը մերերի ակնկա-
ռւթիւնները ի վերջո ի զերե հանեցին,
և ինչպէս մեղ վհատացրին, նոյնպէս էլ
թշնամիները քաջալերեցին: Ի՞աց ի սրա-
նէ, Ավղանների Կապահանք տիրելը, Ծա-
հը բանտարկելը, նրա որդի Ծահ Թամա-
զի փախչելը, գտարանդի թափառիլն ու
անկարող լինելը զօրաժողով լինիլ, էն-
պիսի լուրեր ենու որոնք ինչպէս մեր թշ-
նամիները նոյնպէս էլ մեք, իւրաքան-
չելը իւր օգափի հետեւութիւնն էր երեա-
կայում ու մեկնում, իւրաքանչիւրն ըստ
իւր քմաց իւր օգտի յառաջալիմութեան
լուրերն էր տարածում: Ի՞այց հետզհետէ
երբ ստուգուեցաւ Ուռւսաց զօրքի վերա-
դանախ, և թէ Ծահ Թամազն եկած է
Թավրէզ, և որպէս թէ նա բանակով
շուտով դալոց է զսպել զայելը, մեծ
հարուած տուեց մեղ, ինչպէս կերեայ
յետազայ պատմութենէս :

(Առաջնական է Հայություն)

ԳՈԼՈՒՑ ՇԻՐԱՅԱԿԱՆԱՆ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա. Գ. Խ. Ա. Խ. Թ. Ա. Յ. Մ. Ի. Բ. Գ. Ի. Ի.

ՍԿ. Բ. Ա. Խ. Ա. Խ. Թ. Ի. Ի. Խ. Ա. Խ.

ՀԱՅԱ Յ. Ա. Ա. Զ. Ա. Դ. Ա. Խ. Ի. Թ. Ե. Ա. Հ. Ա. Յ. Ա. Յ.

Ենդիոյ ազատամիտ տերութեան մ.ջ
մի իշխանութիւն կայ, որ ոչ թագուհուցն
է յառաջ դափի և ոչ խորհրդանոցէն,
բայց և այսպէս այդ իշխանութիւնը ամե-
նամեծ ազդեցութիւն է զործում իրողու-

թեանց վերսոյ: Եյսպիսի ստրօրինակ պա-
րագայի մասին որ և է տեղեկութիւնը ան-
տարակոյս հետաքրքրաշարժ համարելով,
արժան դատեցինք հաղորդել ընթեցասի-
րաց նորա մանրամասնութիւնքը:

Երբ որ Ենդիոյ ժողովուրդը անտարբեր
է կամ անմիաբան իւր կարծեաց մ.ջ, տէ-
րութիւնը ընդարձակաբար վարում է իւր
իշխանութիւնը, բայց այն ինչ այդ ժողո-
վուրդը յաւզուած է և միաբան, նա խօ-
սում է բարցրաձայն և որ և է վարչութեան
անհնար է նորան ընդդիմանալ:

Եթէ ժողովուրդի կամքը այդպիսի ան-
յաղթ չարութիւն ունի, ում է յանձ-
նուած ուրեմն այդ կամքը յայանելու իրա-
ւունքը:

Ես աջուայ ժամանակները համարեատքո-
լոր այն մարզիկը, որոնք կարող էին յանձն
առնուլ այդպիսի աշխատութիւնը, ամե-
նայն չարութենէ հետեւմ էին կարծիք
յօրինել, պարզաբանում էին իւրեանց
սեփական միտքերը, ջանք էին անում ձեռք
բերել և իւրեանց բարեկամները, թէ բե-
րանացի վիճաբանութեանց մ.ջ, և թէ
յետազայ ժամանակներում երկար զրաւոր
տեղեկութեանց մ.ջ: Ի՞այց հետզհետէ, իբր
տպազրութեան զիւտի ուշացած արդիւնք,
այդ աշխատութիւնը նոր որոշումների նո-
թարկուեցաւ: Ա Ճռական կերպիւ զատե-
ցին, թէ մի քանի պատշաճաւոր մարզիկ
որոնք քաղաքական խնդիրների վարժու-
թիւնը առաջն պաշտօն էին համարում
իւրեանց համար, աւելի յաջողութեամբ
կարող էին այդպիսի զործը կատարել քան
միաները, որոնք սովորաբար այլ և այլ
գործերով զբաղուած, զբագւածարար և
մեկուսի պիտեր վճարեին այդ ջանքը: Եյն